

# Պատմության թեստ

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքին, լավ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև սկսեք աշխատանքը:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60:

Թեստի աշխատանքի համար տրամադրվում է 5 ժամ:

Մաղթում ենք հաջողություն



**Հրահանգ №1-24 առաջադրանքների համար:** Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրած պատասխանը նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը, ուր դրել եք X նշանը և այնուհետև նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

# 1. Ո՞ր ծիսական տեսարանն է պատկերված նկարում:



- ա) Օսիրիսի դատաստանը,
- ծ) Փարավոնն օծվելը,
- զ) Աթոնի պաշտամունքը,
- զ) Զոհաբերություն Սեթին:

## 2. Ո՞ր դատողությունն է ճիշտ նկարում պատկերված արտեֆակտի մասին:



- ա) Ք.ա. II-I դարերի հռոմեական սեստերցիների հայտնաբերումը Իբերիայի թագավորության տարածքում վկայում է միջազգային առևտրի զարգացման մասին:
- բ) Ալեքսանդր Մակեդոնացու ստատերների հատումը Սելևկիդների թագավորությունում Ք.ա. IV դարում կայսրության ժառանգականության փաստաթուղթն էր:
- գ) Կոլխական թեթրիի առկայությունը կարևորագույն փաստարկ է Արևմտյան Վրաստանում Ք.ա VI դարից թագավորության գոյությունը հաստատելու համար:
- դ) Ք.ա. V դարում Բոսֆորի թագավորությունում հատեցին հնագույն մետաղադրամը, որն արագ տարածվեց հունական գաղութներում:

### 3. Ինչո՞վ էր առանձնահատուկ Պերիկլեսի կառավարման դարաշրջանը:

- ա) Հրավիրեցին առաջին ժողովրդական ժողովը,
- բ) Հիմնվեցին առաջին գրավոր օրենքները,
- գ) Վերականգնվեց «Կորինթոսի ծովային միությունը»,
- դ) Սկսվեց Պելոպոնեսի պատերազմը:

#### 4. Ովքե՞ր էին պերիեկները հին Հունաստանում:

- ա) Օլիմպիական խաղերում հաղթանակածներ, որոնց դիմավորում էին հաղթահանդեսով,
- բ) Մարգարեներ, որոնք հեթանոսական ծիսակատարություն էին կատարում,
- գ) Ատենակալներ, որոնք վերջնական դատավճիռն էին կայացնում,
- դ) Ազատ բնակիչները, որոնք չունեին քաղաքական իրավունքներ:

5. Ո՞ր հոռմեական կայարն է գրել «Խորհրդածություններ» փիլիսոփայական աշխատությունը:

ա) Օկտավիանոս Օգոստոսը,

ծ) Տրայանոսը,

ց) Վեսպասիանոսը,

զ) Մարկոս Ավրելիոսը:

6. Ո՞ր պատմական իրադարձության հետ է կապված «Մրանով կհաղթես» հայտնի արտահայտությունը:

- ա) Հուլիոս Կեսարի կողմից Բուֆորի թագավորությունը պարտության մատնելու,
- բ) Միհրդատի դեմ ճակատամարտում Պոմպեոսի հաղթանակի,
- գ) Տիտոսի կողմից Երուսաղեմը գրավելու,
- դ) Մաքսենցիոսի դեմ Կոստանդիանոս Մեծի ճակատամարտի:



7. Գոյություն ունի տեսակետ, որ Հուստինիանոս Մեծը որոշ չափով վերականգնեց Հռոմի Կայսրությունը:

Ո՞ր փաստը կարող ենք համարել դրա վկայություն:

ա) Պիրենեյան թերակղզուց արտաքսեց մավրերին,

ծ) Էգեյան ծովի կղզիներն ազատեց վիկինգներից,

ց) Գրավեց Ապենինի թերակղզու մեծ մասը,

Պարթևներին պարտության մատնեց և արտաքսեց Փոքր Ասիայից:

## 8. Ո՞րն է Բագրատ III-ի մասին ճիշտ դատողությունը:

- ա) Առաջին Բագրատիոնին էր, ում օժեց կաթողիկոսը և շնորհեց աբխազների թագավոր, վրացիների կյուրապաղատ, Համայն Հերեթիի տիրակալ տիտղոսը:
- բ) Առաջինն էր, ով կարողացավ մեկ թագավորության մեջ միավորել Արևելյան, Արևմտյան և Հարավային Վրաստանը և կոչվել թագավոր աբխազների, վրացիների, ռաների և կախերի:
- գ) Վրաց թագավորներից առաջինն էր, ով հրաժարվեց բոլոր բյուզանդական տիտղոսներից և կոչվեց Համայն Վրաստանի թագավոր, տիրակալ Արևելքի և Արևմուտքի:
- դ) Առաջինն էր, ով ենթարկեցրեց արևելյան և արևմտյան Վրաստանի իշխաններին և թագավոր օժվելուց հետո ստացավ վրացիների, աբխազների, մեսխերի և հերեթիի ժողովրդի թագավոր տիտղոսը:

## 9. Ի՞նչ հետևեց 1071 թվականի Մանազկերտի ճակատամարտին:

- Տ) Բյուզանդիան չկարողացավ հետ պահել սելջուկներին և գրեթե ամբողջությամբ կորցրեց տերությունները Փոքր Ասիայում:
- Ծ) Նույն տարվա վերջում սելջուկները կարողացան գրավել Հյուսիս-արևմտյան Իրանն ու Մազանդարանը:
- Ճ) Բյուզանդացիներին պարտության մատնելուց հետո սելջուկները շուտով առաջին անգամ ներխուժեցին Հարավային Վրաստան:
- Թ) Ճակատամարտի հաջորդ տարին սելջուկները գրավեցին Հայաստանի թագավորությունը և Վրաստանի թագավորին ստիպեցին վճարել տուրք:

10. Այլ պատճառների հետ մեկտեղ, միջնադարում ի՞նչ նշանակություն ունեին ճանապարհները քաղաքների հիմնադրման նպատակով վայր ընտրելու համար:

Տ) Քաղաքի մանուֆակտուրաների համար գետի ջուր էր անհրաժեշտ, սակայն այն ժամանակվա ճանապարհները միայն գետի հունի եկայնքով էին անցնում:

Ծ) Քաղաքների տնտեսական կյանքն ու բարօրությունը կախված էր առևտրից և արհեստից, իսկ առևտրի համար անհրաժեշտ էին ճանապարհներ:

Ճ) Ճանապարհները Հռոմի Պապի հովանու տակ էին և դրանց երկայնքով հիմնադրված քաղաքները ևս ինքնաբերաբար անցնում էին Հռոմի պապի պաշտպանության ներքո:

Թ) Քաղաքները հիմնադրվում էին միայն թագավորին պատկանող հողատարածքների վրա և ճանապարհները նույնպես պետությունում միայն թագավորին էին պատկանում:

11. Այլ պատճառների հետ մեկտեղ, ինչո՞վ էր պայմանավորված XII-XIII դարերի սահմանագծին Անին և Դվինը գրավելու Վրաստանի թագավորության փորձը:

- Տ) Վերադարձնել Քարթլիի նախկին թագավորությանը պատկանող տարածքը և պաշտպանել այնտեղ բնակվող քրիստոնյաներին:
- Ծ) Վերահսկել կարևոր առևտրական ճանապարհները և հակառակորդին արտաքսել ավելի դեպի հարավ:
- Ճ) Տարածել քաղկեդոնական հավատքը արևմտյան Շիրվանում և պաշտպանել թագավորության արևելյան սահմանները:
- Թ) Վերականգնել հարևան քրիստոնեական թագավորությունը և հետագայում դաշնակից դարձնել մոնղոլների դեմ պայքարում:

12. Ինչո՞վ էր կարևոր VI Խաչակրաց արշավանքը, որի հրամանատարն էր Սրբազան Հռոմեական կայսրության կայսր Ֆրիդրիխ II-ը:

ա) Խաչակիրները գրավեցին Բաղդադը:

ծ) Սելջուկները զիջեցին Անտիոքը:

գ) Մուսուլմանները կորցրեցին Դամասկոսը:

դ) Քրիստոնյաները վերադարձրեցին Երուսաղեմը:

### 13. Ո՞ր դատողությունն է ճիշտ Միջնադարյան Եվրոպայում գոյություն ունեցող համալսարանների մասին:

- ա) Ինքնավար կորպորացիաներ էին:
- բ) Ուսուցումն ընթանում էր միայն հունարեն լեզվով:
- գ) Պրոֆեսորների կազմում միայն աշխարհիկ անձինք էին:
- դ) Ենթարկվում էին անմիջապես կարդինալների կոնկլավին:

**14. Այլ պատճառների հետ մեկտեղ, ինչո՞վ է բացատրվում Ֆլորենցիայի վերածուրը վերածննդի կենտրոնի:**

Տ) Որոշակի ժամանակով քաղաքը վերածվեց Հռոմի Պապի նստավայրի, ինչին հետևեց մեծ շինարարությունը:

Ծ) Ռազմական հաջող արշավանքների արդյունքում քաղաքը համալրվեց մեծ քանակությամբ մշակույթի հուշարձաններով:

Չ) Քաղաքում հիմնադրվեց Եվրոպայում ամենահին գիմնազիան, որտեղ գործունեություն էին վարում ականավոր գիտնականներ:

Թ) Առևտրի զարգացման արդյունքում քաղաքի հարստացած առաջադեմները հովանավորում էին արվեստագետների խմբին:



## 15. Ինչո՞վ էր առանձնանում ինկերի պետությունը նախակոլումբյան Ամերիկայում:

- ա) Պետության տարածքում գործում էր լավագույն ճանապարհային համակարգ:
- բ) Պետության գրասենյակը օգտվում էր այբբենական գրային համակարգից:
- գ) Պետության ռազմական հզորությունը որոշում էր հեծյալ բանակը:
- դ) Պետության բնակչության շրջանում տարածված էր մոնոթեիստական կրոնը:

16. Ո՞րն էր Միավորված Վրաստանի թագավոր՝ Ալեքսանդր I-ի թագավորության կարևոր արդյունքներից մեկը:

- ա) Լենգ Թեմուրի արշավանքներից հետո ավերված երկրի վերականգնումը:
- բ) Ռուսաստանի հետ միութենական պայմանագրի վերջնական ձևակերպումը:
- գ) Երկիրն ազատելը Ղզլբաշական Իրանի նկատմամբ զինձառայության պարտքից:
- դ) Մոնղոլների հարյուրամյա տիրապետության ավարտը:

17. XVI դարի 30-ական թվականներին ի՞նչը դարձավ Սրբազան Հռոմի Կայսրությունում հակադրված կաթոլիկ և և բողոքական գերմանացի իշխանների ժամանակավոր հաշտեցման պատճառ:

ս) Օսմանների կողմից Վիեննան գրավելու փորձը:

ծ) Տիեզերական ժողով հրավիրելու Հռոմի Պապի կոչը:

ց) Ֆրանսիացիների կողմից Հռենոսին ասփամերձ հողերին տիրանալու ցանկությունը:

ղ) Դասակարգերի բաժանումը չեղարկելու կայսրի մտադրությունը:

18. Այլ պատճառների հետ մեկտեղ, ի՞նչը թեթևացրեց օսմաններին XVI դարավերջին գրավել Մեսիտեթիի մեծ մասը:

ս) Իմերեթիի թագավորների դաշնակից լինելը:

ծ) Քարթլի -Կախեթիի թագավորության թուլացումը:

ց) Արևմտյան Վրաստանում լեզգիների հարձակումների սկիզբը:

ղ) Սամցխե-Սաաթաբագոյի կառավարիչների քաղաքականությունը:

19. Ինչի՞ մատնանշում կարող ենք համարել XVII դարում Սարիամ թագուհու հրամանով «Քարթլիի կյանքն» արտագրելը:

ա) Նոր գրական լեզվական նորմեր հիմնելու:

ծ) Գելաթիի և Իդալթոյի ակադեմիաների վերածննդի:

ց) Իրանի պետության ազդեցությունը կտրուկ նվազելու:

ղ) Կրթության և մշակույթի հանդեպ հետաքրքրությունն ուժեղացնելու:

## 20. Ո՞ր դատողությունն է ճիշտ «Գեորգիկյան դաշնագրի» պայմանների մասին:

- ա) Քարթլի-Կախեթիի թագավորությունը ներառված էր Ռուսաստանի կայսրության կազմում և նրա տարածքում հիմնվում էր փոխարքայություն:
- ծ) Քարթլի-Կախեթիի թագավորությունում ֆորմալ կերպով պահպանվում էր թագավորական իշխանությունը, թեպետ երկրի արտաքին և ներքին քաղաքականության վարումը փոխանցվում էր Ռուսաստանին:
- զ) Սահմանափակ էր Քարթլի-Կախեթիի թագավորության արտաքին քաղաքականությունն վարելու իրավունքը, սակայն ներքին քաղաքականության մեջ լիովին պահպանում էր անկախությունը:
- զ) Քարթլի-Կախեթիի թագավորությունը ստանձնում էր տուրք վճարել Ռուսաստանի կայսրությանը և զիջել Ռուսաստանի բանակին երկրի բոլոր կարևոր բերդ-ամրոցները:

## 21. Ի՞նչ արդյունքով ավարտվեց Աբուքիրի ծովային ճակատամարտը:

- ա) Ֆրանսիացիները հաղթանակ տարան իսպանական նավատորմի նկատմամբ:
- բ) Բրիտանական նավատորմը ջախջախեց ֆրանսիական էսկադրան:
- գ) Պորտուգալացիների նավատորմը պարտության մատնեց օսմաններին:
- դ) Անգլիացիները խորտակեցին հոլանդական նավատորմը:

## 22. Ինչո՞վ էր պայմանավորված կուլակների հակախորհրդային տրամադրությունը:

- ա) Կուլակությունը Ռուսաստանի Կայսրության պետական պաշտոնյաների դասակարգ էր, որոնց նոր իշխանությունն ազատում էր աշխատանքից:
- բ) Կուլակությունն աղքատ գյուղացիների խումբն էր, որոնց մասնավոր սեփականության մեջ բռնկվածները չփոխանցեցին խոստացած հողատարածքները:
- գ) Կուլակությունը փոքր ձեռնարկատերերի այն խումբն էր, որոնց ձեռնարկությունների ազգայնացում իրականացրեց իշխանությունը:
- դ) Կուլակությունը հարուստ կալվածատեր գյուղացիներն էին, որոնց իշխանությունը կոլեկտիվացման գործընթացում զրկում էր սեփականությունից:



23. Ո՞ր պայմանը չէր ենթադրում Սառը պատերազմի ժամանակահատվածում 1975 թվականին Հելսինկի քաղաքում ստորագրված ակտը:

ա) Պետությունների տարածքային ամբողջականության անձեռնմխելիություն:

ծ) Ռազմաքաղաքական բլոկների աստիճանական փլուզում:

գ) Միջազգային վիճելի հարցերի խաղաղ լուծում:

դ) Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների հանդեպ հարգալից վերաբերմունք:

24. ԽՍՀՄ-ի դեմ ինչպե՞ս վարվեց արևմտյան պետությունների մեծ մասը ԱՄՆ-ի ղեկավարությամբ, երբ խորհրդային զորքերը ներխուժեցին Ավրանստան:

ճ) Ժամանակավորապես դադարեցրեցին ՄԱԿ-ի անդամակցությունը:

Ն) Իրականացրեցին տնտեսական շրջափակում:

Շ) Դադարեցրեցին դիվանագիտական հարաբերությունները:

ԉ) Բոյկոտ հայտարարեցին Մոսկվային օլիմպիադային:

### **Հրահանգ №25-28 առաջադրանքների համար**

Ժամանակագրական առումով դասավորեք պատմական իրադարձությունները: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա հատկացված վանդակներում: Նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն անվանած իրադարձության համապատասխան թվանշանը: Առաջին վանդակում գրվում է այն թվանշանը, որով նշված է բոլորից վաղ տեղի ունեցած իրադարձությունը և այլն, համապատասխանաբար, վերջին երրորդ վանդակում կգրվի այն թվանշանը, որով նշված է բոլորից ուշ տեղի ունեցած իրադարձությունը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

25. Ժամանակագրական առումով դասավորեք Հին Արևելքի պետությունները, ըստ դրանց հիմնադրման ժամանակի:

1. Աքեմենյան թագավորություն
2. Խեթական թագավորություն
3. Ուրարտուի թագավորություն

26. Ժամանակագրական առումով դասավորեք արաբների նվաճողական պատերազմների հետ կապված իրադարձությունները:

1. Պուատիեի ճակատամարտ
2. Վեստգոթական թագավորության նվաճումը
3. Սասանյան պետության ոչնչացումը

27. Ժամանակագրական առումով դասավորեք XVIII դարում Ռուսաստանի կայսրության պատմության հետ կապված իրադարձությունները:

1. Պոլտավայի ճակատամարտը
2. Ղրիմի խանության նվաճումը
3. Ռեչ Պոսպոլիտայի երրորդ բաժանումը


28. Ժամանակագրական առումով դասավորեք XIX դարում Եվրոպայում զարգացած իրադարձությունները:

1. Գերմանական կայսրության հռչակումը
2. Իտալիայի Միացյալ Թագավորության հռչակումը
3. Առաջին Ֆրանսիական կայսրության հիմնադրումը

**Հրահանգ №29 առաջադրանքի ամար:**

Աշակերտին տրվեց քարտեզ: Սեփական գիտելիքի և քարտեզի վրա առկա տեղեկատվության միջոցով նա պետք է պատասխաներ տրված հարցերին: Աշակերտի տրված պատասխաններից երկուսը (2) սխալ են պարունակում: Դուք պետք է գտնեք սխալները, արտագրեք դրանք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում և նույն տեղում ավելացնեք ճիշտ պատասխանները: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 2:

**Առաջադրանք 29: Քարտեզն ու հարցերը տես հաջորդ էջերում**







## საუბრე და საზღვარი

### Աշակերտին ուղղած հարցերը.

**29.1.** Անվանեք այն կոնկրետ պատմական անձին, որի իրականացրած արշավանքները պատկերված են քարտեզի վրա:

**29.2.** Քարտեզի համաձայն, ո՞ր օտար պետության մայրաքաղաք չի արշավել անձը, որի նվաճումները պատկերված են քարտեզի վրա:

**29.3.** Անվանեք քարտեզի վրա նշված պետության ամենաարևելյան կետում գտնվող քաղաքը:

**29.4.** Քարտեզի համաձայն, անվանեք երեք քաղաք, որտեղ տեղի են ունեցել ապստամբությունները:

**29.5.** Ո՞ր պետությունը պարտություն կրեց Անգորայի ճակատամարտում և ըստ քարտեզի, ինչո՞ւ էր այս ճակատամարտը կարևոր հաղթանակ տարած կողմի համար:

### Աշակերտի տված պատասխանները.

**29.1.** Չինգիզ Խան:

**29.2.** Բյուզանդիայի:

**29.3.** Դելի:

**29.4.** Հերաթ, Սպահան, Բաղդադ:

**29.5.** Օսմանյան կայսրությունը: Օսմանները չկարողացան գրավել Կոստանդնուպոլիսը:

**Հրահանգ N° 30 առաջադրանքի համար:** Ուշադիր վերլուծեք նկարում տրված տեղեկատվությունը և պատասխանեք տրված հարցերին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 7:


**Առաջադրանք 30: Նկարներն ու հարցերը տես հաջորդ էջերում**



# Առաջադրանք 30



N1



N2



N3

հարցերը տես՝ հաջորդ էջում

## Հարցեր.

(2) **30.1** Ո՞ր նկարն է (գրեք համարը) արտացոլում այն հիմնական պատճառներից մեկը, որը պայմանավորեց նկարում պատկերված պատմական գործընթացը, և ըստ նկարի, ո՞րն էր այդ պատճառը:

(2) **30.2** Ո՞ր նկարն է (գրեք համարը) արտացոլում պատմական գործընթացը մեկնարկելու առիթը: Ձեր պատասխանը հիմնավորեք նկարում ներկայացված տեղեկատվության համաձայն:

(2) **30.3** Ո՞ր նկարն է (գրեք համարը) արտացոլում ներկայացված դրվագներից ամենավերջին փուլը և ո՞րն էր այս նկարի գլխավոր իմաստը:

(1) **30.4** Անվանեք մեկ կոնկրետ դասի թեմայի վերնագիր, որի ընթացքում կօգտագործեիք բոլոր երեք նկարները:

**Հրահանգ № 31 առաջադրանքի համար:**

Ուշադիր կարդացեք ստորև բերված պատմական փաստաթուղթը, ըմբռնեք տեքստը և պատասխանեք հարցերին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 19:

**Առաջադրանք 31: Պատմական փաստաթուղթն ու հարցերը տես հաջորդ էջերում**



**Քաղվածքներ Վրաստանի Դեմոկրատական  
Հանրապետության և ՌԽՖՍՀ-ի միջև կնքված  
պայմանագրից**

Հոդված I: Հիմք ընդունելով ՌԽՖՍՀ-ի կողմից հռչակված բոլոր ազգերի ինքնորոշման մասին իրավունքը, ընդհուպ մինչև ամբողջական տարանջատումը, Ռուսաստանը անվերապահորեն ճանաչում է Վրաստանի պետության անկախությունը:

Հոդված II: Հիմք ընդունելով սույն պայմանագրի 1-ին հոդվածում հայտարարված սկզբունքները՝ Ռուսաստանը հրաժարվում է բոլոր տեսակի միջամտություններից Վրաստանի ներքին գործերին:

Հոդված III: 1. Վրաստանի և Ռուսաստանի միջև պետական սահմանը անցնում է՝ Սև ծովից Փսոու գետի երկայնքով մինչև Ախախչա լեռը, այնուհետև մինչև Ագապետ լեռը և այնտեղից Սև ծովի, Քուրթայիսիի և Թբիլիսիի նախկին նահանգների հյուսիսային սահմանով մինչև

Անցնել հարցերին՝ [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#)

Չաքաթալա օկրուգը և այս օկրուգի արևելյան սահմանով մինչև Հայաստան:

2. Նշված սահմանային գծում գտնվող բոլոր լեռնանցքները մինչև 1922 թվականի հունվարի 1-ը ճանաչվում են չեզոք: Պայմանավորվող կողմերից ոչ մեկը իրավունք չունի գրավել և ամրանալ այդ լեռնանցքներում:

Հոդված IV: 1. Ռուսաստանը պարտավորվում է անվերապահորեն ճանաչել Վրաստանի կազմում, Սևծովյան նահանգի այն տարածքը, որը սույն պայմանագրի III հոդվածի 1-ին կետի համաձայն, փոխանցվելու է Վրաստանին, ինչպես նաև Ռուսաստանի կայսրության Թբիլիսիի և Քուրթայիսիի նահանգները, Բաթումիի մարզը և Չաքաթալայի ու Սուխումիի օկրուգները:

Հոդված V: Արդարացի ճանաչելով Ռուսաստանի պահանջը՝ կանխել Վրաստանի տարածքում որևէ գործողություն, որոնք Վրաստանում կարող են ստեղծել իրավիճակ, որը կարող է սպառնալ

**Տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում**

Ռուսաստանի անկախությանը և վերածել Վրաստանը ՌԽՖՍՀ-ի կամ նրա դաշնակից պետությունների դեմ բազայի, Վրաստանը պարտականություն է ստանձնում՝

1. Անմիջապես զինաթափել և համակենտրոնացման ճամբարներ տեղափոխել՝ պայմանագիրը կնքելու պահին Վրաստանի տարածքում գտնվող կամ հետագայում նրա տարածքը հատող ռազմական և ռազմածովային ստորաբաժանումները, ջոկատները և խմբեր, որոնք ունեն Ռուսաստանի կամ նրա որևէ հատվածի կառավարության կամ Ռուսաստանի դաշնակից պետությունների կառավարությունների դերը ստանձնելու հավակնություն, ինչպես նաև ներկայացուցչություններին և պաշտոնատար անձանց, կազմակերպություններին և խմբերին, որոնց նպատակն է տապալել Ռուսաստանը կամ նրա դաշնակից պետությունների կառավարությունները: Անմիջապես զինաթափել Վրաստանի նավահանգիստներում տեղակայված բոլոր նավերը, որոնք գտնվում են

2. սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված

Անցում հարցերին՝ [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#)

ռազմածովային ուժերի, կազմակերպությունների կամ խմբերի կազմում:

4. Նրանց զինաթափումից հետո Ռուսաստանին փոխանցել սույն հոդվածի 1-ին կետում նշված զորամասերը, կազմակերպությունները, խմբերը և նավերի անձնակազմը: Ցուցում. Ռուսաստանը պարտավորվում է փրկել սույն հոդվածի համաձայն իրեն փոխանցված բոլոր անձանց կյանքը:

5. Վրաստանի այն տարածքից, որը սահմանված է սույն պայմանագրի IV հոդվածով, վտարել բոլոր տեսակի զորքերը և զորամասերը, որոնք ներառված չեն Վրաստանի կառավարական գորքերի կազմում:

6. Ձեռնարկել միջոցներ՝ սույն հոդվածի 5-րդ կետում թվարկված զորքերի և զորամասերի Վրաստանի տարածքում ներկայությունը կանխելու համար:

7. Սույն հոդվածի 1-ին և 5-րդ կետերում թվարկված ռազմական ստորաբաժանումներին, կազմակերպություններին և խմբերին պատկանող անձանց արգելել

**Տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում**



ցանկացած ձևով, այդ թվում որպես կամավորներ ծառայել Վրաստանի կառավարական բանակում, քանի որ այդ անձինք ազգությամբ վրացի չեն:

Հոդված VI: Ռուսաստանը պարտավորվում է իր տարածքում թույլ չտալ ցանկացած այնպիսի խմբերի և կազմակերպությունների առկայությունն ու գործունեությունը, որոնք ունեն Վրաստանի կառավարության դերը կատարելու հավակնություն: Ինչպես նաև ցանկացած տեսակի խմբերի և կազմակերպությունների, որոնց նպատակն է տապալել Վրաստանի կառավարությունը: Ռուսաստանը պարտավորվում է ներգործել դաշնակից պետությունների վրա, որպեսզի կանխի իրենց տարածքում սույն հոդվածում նշված խմբերի և կազմակերպությունների առկայությունը:

Հոդված X: Վրաստանի իշխանությունը պարտավորվում է պատժից և հետագա քրեական հետապնդումից ազատել բոլոր այն անձանց, որոնք Վրաստանի տարածքում ենթարկվել են այդպիսի

Անցնել հարցերին՝ [1](#) [2](#) [3](#) [4](#) [5](#) [6](#) [7](#) [8](#) [9](#) [10](#) [11](#)

քրեական հետապնդման ՌԽՖՍՀ-ի կամ կոմունիստական կուսակցության օգտին կատարված գործունեության համար: Ցուցում. Վրաստանը պարտավորվում է անհապաղ ազատել բոլոր այն բանտարկյալներին, ովքեր պատիժ են կրում վերը նշված գործողությունների համար:

Հոդված XV: Երկու պայմանավորվող կողմերի քաղաքացիների միջև ծագած հանրային իրավական և մասնավոր իրավական խնդիրները, ինչպես նաև երկու պետությունների միջև գոյություն ունեցող առանձին հարցերը լուծում են հատուկ խառը հանձնաժողովները...: Այս հանձնաժողովներն, ի դեպ, պարտավորվում են...

1. Կազմել առևտրային պայմանագրեր և տնտեսական բնույթի այլ համաձայնագրերը:

3. Լուծել Բաքու-Բաթումի նավթամուղի այն հատվածի օգտագործման, տիրապետման և տնօրինման հարցերը, որը սույն պայմանագրի IV հոդվածի համաձայն տեղակայվելու է Վրաստանում:

**հարցերը տես հաջորդ էջերում** [http://georoute.ge/Russian-Georgian\\_agreement](http://georoute.ge/Russian-Georgian_agreement)

*Հարցեր:*

(1) **31.1.** Ո՞ր թվականին է կնքվել այս պայմանագիրը:

(1) **31.2.** Ըստ պայմանագրի, ո՞ր սկզբունքի հիման վրա էր ճանաչում Ռուսաստանը Վրաստանի անկախությունը:

(1) **31.3.** Ըստ պայմանագրի, Ռուսաստանի կայսրության ո՞ր վարչական միավորը բաժանվեց պայմանավորվող պետությունների միջև:

(1) **31.4.** Լուծում էր, թե՞ ոչ այս պայմանագիրը միջպետական հարաբերությունների բոլոր հարցերը: Ձեր տեսակետը հաստատելու համար անպայման բերեք հիմնավորված փաստարկ:

Անցնել փաստաթղթի տեքստի [1-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [2-րդ էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [3-րդ էջին](#)

(2) **31.5.** Ի՞նչ էր ճանաչում Ռուսաստանը պայմանագրի II հոդվածով: Տեքստից ներկայացրեք պայմանագրի կետերից մեկի բովանդակությունը, որը կարող է հակասել այս հոդվածին:

(2) **31.6.** Անվանեք Ռուսաստանի կայսրության վարչական միավորը, որը տրված փաստաթղթի համաձայն, Ռուսաստանը ճանաչեց Վրաստանի կազմի մեջ, սակայն մի քանի տարի անց այդ վարչական միավորն ամբողջությամբ փոխանցվեց մեկ այլ պետության: Բացատրեք, թե ո՞ր նոր քաղաքական իրավիճակը հանգեցրեց դրան:

(2) **31.7.** Ըստ պայմանագրի, ի՞նչ կարգավիճակ էր շնորհիվ լեռնանցքներին և Ձեր կարծիքով, ո՞ր կողմի համար էին առավել շահավետ համապատասխան հոդվածում նշված պայմանները: Ձեր տեսակետը հաստատելու համար անպայման բերեք հիմնավորված փաստարկ:

Անցնել փաստաթղթի տեքստի [1-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [2-րդ էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [3-րդ էջին](#)

(2) **31.8.** Անվանեք պայմանագրի  $V$  հոդվածի կետերից մեկը, որը կարող էր ազդեցություն գործել Վրաստանի պաշտպանողունակության վրա: Ձեր տեսակետը հաստատելու համար անպայման բերեք հիմնավորված փաստարկ:

(2) **31.9.** Տրված փաստաթղթի համաձայն, ո՞ւմ էր բանտարկում կամ հետապնդում Վրաստանի իշխանությունը նախքան պայմանագիր կնքելը և ինչո՞ւ էր այդպես վարվում:

(2) **31.10.** Ձեր կարծիքով, ինչո՞ւ ներառեցին պայմանագրում Ադրբեջանի և Վրաստանի տարածքով անցնող Բաքու-Բաթումի նավթամուղի հարցը: Ձեր տեսակետը հաստատելու համար անպայման բերեք հիմնավորված փաստարկ:

(3) **31.11.** Անվանեք երեք կոնկրետ պայման, որոնցից նույնիսկ մեկն էր բավական, որ անձի կամ անձանց խմբի հանդեպ գործեին  $V$  հոդվածով նախատեսված պայմանները:

Անցնել փաստաթղթի տեքստի [1-ին էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [2-րդ էջին](#)

Անցնել փաստաթղթի տեքստի [3-ին էջին](#)

**Հրահանգ № 32 առաջադրանքի համար:**

Ուշադիր կարդացեք ստորև տրված առաջադրանքը և պատասխանեք հարցերին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Բոլոր հարցերին տվեք լիարժեք և սպառիչ պատասխան: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 4:

## Առաջադրանք 32: Բանավեճի թեմայի սահմանում

- (1) **32.1.** Ո՞ր կոնկրետ թեման քննարկելիս կկիրառեիք №31 առաջադրանքում տրված պատմական փաստաթուղթը:
- (1) **32.2.** Դասին քննարկելիք թեմայի կարևորագույն հարցը նախատեսելով, ձևակերպեք բանավեճի թեմայի վերնագիրը:
- (2) **32.3.** Ձևակերպեք երկու այլընտրանքային դիրքորոշում, որոնք կարող են առաջանալ բանավեճի ընթացքում: